

<<Նոր ժամանակի կրթություն>> ՀԿ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՄՈՒՑԻՉՆԵՐԻ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԼՔ

Հետազոտության թեման՝ <<Ընտանիքի հոբեբանություն, կոնֆլիկտներ>>

Առարկան՝ Մայրենի

Հետազոտող ուսուցիչ՝ Գայանե Առաքելյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի հ.175 միջնակարգ դպրոց

Երևան 2023

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	3
ԳԼՈՒԽ 1. ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆ, ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ	
1.1. Ընտանիքի հոգեբանության նկարագիրը .....	4
1.2. Ընտանեբան կոնֆլիկտների նկարագիրը և տեսակները .....	5
ԳԼՈՒԽ 2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁԻ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ ԿՐԱ	
2.1. <u>Ի՞նչ ազդեցություն են ունենում ընտանեկան կոնֆլիկտները երեխայի հոգեբանության վրա .....</u>	<u>10</u>
2.2. <u>Կոնֆլիկտների ծագման պատճառները .....</u>	<u>14</u>
2.3. <u>Կոնֆլիկտի յուժման մի քանի ասպեկտներ .....</u>	<u>17</u>
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ .....	18
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	19

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխայի սոցիալականացման գործընթացը սկսվում է ընտանիքում: Հետևաբար, դպրոցական կյանքում ծագող խնդիրների նկատմամբ երեխայի վերաբերմունքի մեջ գերակշռող մաս են կազմում ընտանեկան միջավայրում ձեռք բերած սոցիալական դիրքորոշումները: Ընտանիքի կառուցվածքը, ընտանեկան դերերը, ներընտանեկան հարաբերությունների մակարդակները կարևոր դեր ու նշանակություն ունեն երեխայի հոգեբանության վրա: Ընտանիքը նաև այն սոցիալական միջավայրն է, որտեղ երեխան փորձում է վերլուծել դպրոցում կատարված իրադարձությունները և տեղեկությունները:

Բոլոր ժամանակներում էլ ընտանիքում տարբեր պատճառներով ծագել են կոնֆլիկտներ: Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, քայքայում հարաբերությունները, ընտանիքի անդամների մեջ առաջացնում են սթրես, լարվածություն, տհաճ հոգեվիճակներ: Եվ արդյունքում ամենից շատ տուժում են երեխաները, որոնք ունենում են վարքի խանգարումներ:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ կայանում է նրանում, որ երեխայի անձի ձևավորումը սկսվում է ընտանիքում, և ընտանեկան մթնոլորտը, հարաբերությունները, դաստիարակությունը վճռորոշ ազդեցություն են ունենում երեխայի ներդաշնակ գարգացման և հոգեկան առողջության վրա:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է՝ բազահայտել ընտանեկան միջավայրի ներընտանեկան փոխհարաբերությունների, ծնողական վերաբերմունքի ազդեցությունը կոնֆլիկտների կանխարգելման գործընթացում: Ցուցաբերել նոր մոտեցում երեխայի կոնֆլիկտների հետ կապված վախերի, տագնապների ուսումնասիրմանը՝ ծնողի վերաբերմունքի տեսանկյունից:

ԳՈՐԾՆԱԿԱԼ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ Է՝ հետազոտության արդյունքները հնարավորություն են ընձեռում կրտսեր դպրոցականների հետ աշխատող հոգեբաններին, հոգեթերապևտներին, մանկավարժներին, ծնողներին ճանաչել և գնահատել կոնֆլիկտների հետ կապված երեխայի վախի, տագնապի դրսևորումները, արդունավետ կազմակերպել դրանց կանխագելման գործելթագր:

## ԳԼՈՒԽ 1. ԸՆՏԱՆԵԿԱԼ ՀՈԿԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ

### 1.1. Ընտանեկան հոկեբանության նկարագիրը

Ընտանիքի հոգեբանությունը՝ որպես հոգեբանության մի առանձին ճյուղ, ուսումնասիրվել է բազմաթիվ հոգեբանների կողմից: Ընտանեկան կյանքին նախապատրաստելու կարևոր ուղղություններից մեկն այն է, որ աղջիկներն ու պատանիների հասկանան, որ ամուսնությունը ընտանեկան երջանկության սկիզբն է: Յուրաքանչյուր երիտասարդ միևյև ամուսնանալու պետք է տեղեկագվի, թե ինչին կաողղ է նա բախվել ամուսնական կյանքի ընթագքում: Եվ որպեսզի ընտանիքը լինի բարեհաջող, ապա բոլոր պատկերագումները պետք է լինեն համատեղ: Չուզոնկերներից յուրաքանչյուրը պետք է ընտանիքում լինի տևտեսող, երեխաների հանդեպ պատասխանատու: Դեռևս Արիստոտելն է նշել. <<Ընտանիքը հասարակության բջիջն է>>: Այսինքն, հասարակությունը, հետևաբար նաև պետությունը, կարող են աողղ լինել, եթե աողղ և կայուն է ընտանիքը: Ընտանիքի հոգեբանության մասնագետների գտնում են, որ հոգեբանորեն աողղ է այն ընտանիքը, որում հուզական փոխհարաբերությունները ձևավորված ու կայուն են ամուսինների, ծնողների ու երեխաների միջև: Այսինքն աողղ ընտանիքում տիրում է դրական բարոյա - հոգեբանական մթնոլորտ: Չկա այնպիսի ամուսնական գույգ, որտեղ ամուսինները լիովին նման լինեն միմյանց: Սակայն համատեղ կյանքն աստիճանաբար հարթում է կտրուկ տարբերությունները:

Հաճախ զուգոնկերները դառնում են ավելի պակաս ուշադիր միմյանց նկատմամբ, և ավելի եզոհստ, քան առաջ: Սառած գգագմունքները կարող են բազմաթիվ ընտանեկան կոնֆլիկտներ ստեղծել, ուստի սերն ընտանիքում մշտապես պետք է պահպանել: Պետք է

հասկանալ, որ պատանեկան և ամուսնական սերը նույնը չեն: Ներդաշնակ  
ընդանիքներում հարաբերությունների հիմնված են հարգանքի, փոխադարձ օգնության,  
ներողամտության վրա:

### 1.2. Ընտանեկան կոնֆլիկտների նկարագիրը և տեսակները

Բոլոր ժամանակներում էլ ընտանիքում տարբեր պատճառներով ծագել են կոնֆլիկտներ: Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, քայքայում հարաբերությունները, ընտանիքի անդամների մեջ առաջացնում սթրես, լարվածություն, տհաճ հոգեվիճակներ: Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերը, ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա: Գոյություն ունի կոնֆլիկտ հասկացության մի քանի սահմանում: Բ. Մ. Ռեբուսը կոնֆլիկտը բնութագրում է որպես մարդկանց գիտակցության մեջ միմյանց հանդեպ հակադարձ ուղղված և անհամատեղելի միտումների բախում՝ կապված բացասական սուր հուզական ապրումների հետ»: Ըստ Ա. Վ. Սերգեյչուկի՝ կոնֆլիկտը անհատների անհամատեղելի նպատակների, հետաքրքրությունների, դիրքորոշումների, կարծիքների, հայացքների բախում է»: Ըստ վիճակագրական տվյալների ընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառը հաղորդակցման կուլտուրայի, փոխադարձ վստահության, քաղաքավարության, ուշադրության, բարյացակամության, նրբազգացության բացակայությունն է: Իրականում կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ հոգեբանական անհամատեղելիությունը, սեռական խնդիրները, միմյանց մտադրությունները չհասկանալը, վարքի սխալ մեկնաբանությունները, բարոյականության վերաբերյալ տարբեր մոտեցումները, պարտքի և պատասխանատվության զգացումի բացակայությունը և այլն: Ընտանեկան

կոնֆլիկտների հիմքում ընկած է ամուսինների նպատակների և հետաքրքրությունների օբյեկտիվ տարբերությունները, որը հարաբերություններում ընդունվում է որպես հակադրություն: Սոցիալ-հոգեբանական հետազոտությունները հնարավորություն են տալիս առանձնացնել ընտանեկան կյանքում առաջացող կոնֆլիկտների սեսակներ՝

1. Ներանձնային-պետք է նշել, որ այն մարդը, որն ունի ներքին կոնֆլիկտներ, հաճախ սխալ է գնահատում շրջապատի մարդկանց և տեղի ունեցող իրադարձությունը: Արդյունքում տեղի է ունենում հոգեբանական ճնշում և հնարավոր է ներանձնային կոնֆլիկտը վերափոխվի միջանձնային կոնֆլիկտի:

2. Միջանձնային-կոնֆլիկտը ծագում է 2 կամ ավելի մարդկանց միջև: Միջանձնային կոնֆլիկտն առաջանում է մարդկանց համատեղ աշխատանքի ժամանակ և ծագում հակադրությունների լուծման ժամանակ: Նման կոնֆլիկտի լուծումը կախված է մարդկանց զարգացման մակարդակից:

3. Անհատական-խմբային կոնֆլիկտը առաջանում է այն ժամանակ, երբ անհատի նպատակը, վարքը չի համապատասխանում խմբի նորմերին:

4. Միջխմբային կոնֆլիկտ-այս դեպքում կարող է տեղի ունենալ բախում տարբեր խմբերի նպատակների, վարքի միջև: Կոնֆլիկտային գործունեության հիմքում ընկած են՝

ա) գործունեության բնույթը (հարձակվողական, պաշտպանողական, չեզոք

բ) ակտիվության կոնֆլիկտներ (սիրո կորուստ, կապվածություն, կոպտություն, խանդը, կյանքին տարբեր հայացքներով նայելը

գ) նեքին կոնֆլիկտ (դավաճանություն, մեկ այլ մարդու հանդեպ նոր զգացում): Ընտանեկան կյանքը մի ամբողջ գիտություն է, որը շատ բարդ է և անըդիստ զարգացող, քանի որ երկու ճակատագրեր միացել են և դարձել ընդհանուր երկու աշխարհներ: Անիրաժեշտ է ապրել ընդհանուր հոգսերով, հաջողություններով:

Ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերությունների առաջացման հիմնական և ավելի հաճախ հանդիպող պատճառներից մեկը կոնֆլիկտներն են ընտանիքի անդամների միջև: Ընտանիքի անդամների միջև միշտ առկա է պայթար

հանուն իշխանության, հանուն որոշումներ կայացնելու իրավունքի: Օրինակ, ծնողի և երեխայի միջև որոշակի պայթար է առաջանում, թե տարբեր խնդիրների շուրջ ով է վճիռ կայացնելու: Միջամուսնական կոնֆլիկտների առաջացումն ավելի հավանական է դառնում հետևյալ պայմանների առկայության դեպքում կամ հետևյալ պատճառներով.

1. սեփական ես-ի նշանակալիության, կարևորության պահանջմունքի, չբավարարվածության, ամուսիններից մեկի սոցիալական դիրքի ցածրացում

2. դրական հույզերի, պահանջմունքի, չբավարարվածության, քնքշանքի հասկանալու և փոխըմբռնման բացակայության և այլն

3. ցածր կրթամակարդակ

4. աշխատանքի բացակայություն և ֆինանսական դժվարություններ

5. կախվածություն ծնողների ընտանիքներից:

Ամուսնական կոնֆլիկտները հաճախ առաջանում են զույգերի ֆիզիկական և հոգեբանական անհամատեղելիության պատճառով: Հոգեբանական համատեղելիությունը պայմանավորված է ամուսինների խառնվածքի տիպով և բնավորության գծերով: Որքան ամուսինները նման են իրար բնավորությամբ և խառնվածքով, այնքան ավելի շատ են նյարդայնացնում և հոգնեցնում միմյանց: Ներդաշնակ զույգ կարող են լինել օրինակ սանգվինիկ ամուսինն ու մելանխոլիկ կինը: Ֆիզիկական համատեղելիությունը պայմանավորված է կնոջ և տղամարդու օրգանիզմի կառուցվածքով, սեռական օրգանների առանձնահատկություններով, որոնք էական նշանակություն ունեն սեռական կյանքում: Արդեն ապացուցված է, որ սեռական անբավարարվածությունը, ինտիմ կյանքում առկա խնդիրներն առաջացնում են սառնություն ու անտարբերություն կին-տղամարդ հարաբերություններում: Ընտանիք կազմելիս հարկավոր է հաշվի առնել նաև այն, որ տղամարդկանց օրգանիզմի վերջնական ձևավորումը տեղի է ունենում 25 տարեկանում, իսկ կանանց օրգանիզմի վերջնական ձևավորումը՝ 18-20 տարեկանում: Բացի այդ, տղամարդկանց սեռական հակումն ավելի երկար է պահպանվում, քան կանանց: Ուստի, կենսաբանական տեսանկյունից ցանկալի է, որ զույգ կազմելիս տղամարդը լինի տարիքով ավելի մեծ,

որպեսզի սեռական կյանքում լինի ներդաշնակություն: Ամուսնական կոնֆլիկտների առաջացման մյուս հաճախակի հանդիպող պատճառը տղամարդու՝ որպես լոկ ֆինանսի աղբյուր դիտարկվելն է: Այն միտքը, որ ընտանիքի անդամները ֆինանսապես տղամարդուց կախվածության մեջ են, սկսում է ճնշել և բացասաբար անդրադառնալ նրա հոգեկանի վրա: Արդյունքում թուլանում է նրա կապը նախ՝ կնոջ, ապա՝ երեխաների հետ: Գոյություն ունեն նաև այնպիսի ընտանիքներ, որտեղ բավականին բարձր է կոնֆլիկտայնության աստիճանը, խաթարված է ընտանիքի անդորրը, միջանձնային հարաբերություններում առկա է լարվածություն: Դրանք են.

- ներոտիկ ընտանիքներ, որտեղ զույգի մոտ նկատվում են տագնապայնության բարձր մակարդակ, քնի խանդարում, ագրեսիվություն
- ճգնաժամային ընտանիքներ, որտեղ ամուսինները թշնամաբար են տրամադրված միմյանց նկատմամբ, հաշվի չեն առնում միմյանց հետաքրքրությունները, հակված չեն փոխզիջման,
- պրոբլեմային ընտանիքներ, որտեղ առկա խնդիրների, կյանքի ծանր պայմանների արդյունքում ընտանիքը հայտնվում է անկայուն վիճակում:

Ընտանեկան վեճերն իրենց բնույթով կարող են լինել պերմանենտ (անընդհատ): Նման ընտանիքները հիմնականում լինում են քրեածին, կոնֆլիկտածին, ամբարենպաստ ընտանիքներ: Վեճերի ժամանակ գլխուղեղի կեղևում առաջանում է օպտիմալ գրգռման օջախ, որը կարող է ընդգրկել ահռելի ու ավելի կետերի տարածք: Այս դեպքում մարդը կորցնում է ինքնատիրապետումը, դիմացինին լսելու ունակությունը և վեճը վերածվում է կոնֆլիկտի: Ցանկացած վեճի հիմքում ընկած է անհատականության երևույթը, այսինքն անհատականը: Մարդը աշխատում է հնարավորինս վիրավորելով դիմացինին բարձրացնել "Ես"-ի արժեքը: Կոնֆլիկտի հիմնական պատճառը անձնավորության որևիցե պահանջմունքի չբավարարված լինելն է: Սկսած ֆիզիկական, կենսաբանական, ֆիզիոլոգիականից մինչև հոգևոր պահանջմունքները: Ընտանիքի համար ճգնաժամային շրջաններն են՝

1. Միմյանց հարմարվելու փուլ՝ ամուսնական կյանքի առաջի տարին է, երբ ձևավորվում է նոր որակի հարաբերություններ, նոր հոգևոր արժեքներ:



2. Երեխա ունենալու փուլ՝ երեխաների ծնունդը բարդացնում է ամուսինների մասնագիտական աճի հնարավորությունները, քիչ ժամանակ է տրամադրվում անձնական գրավիչ գործունեությանը (հոբբի), կնոջ հոգևածության պատճառով, կապված երեխայի խնամքի հետ, ժամանակավոր սեռական ակտիվության նվազումը:

3. Բախման փուլ՝ երեխաների դաստիարակության վերաբերյալ ամուսինների և նրանց ծնողների հայացքների, տեսակետների բախումը:

4. Միապաղաղության, կամ միջին ամուսնական տարիքի փուլ՝ այս շրջանը երբեմն անվանում են նաև զգացմունքների հագեցվածության փուլ, կամ քաղցի շրջան:

5. Իվոլյուցիոն, կամ միայնակության զգացման փուլ: Այս շրջանը համարվում է 18-ից 24տարի համատեղ կյանքից հետո, որը հաճախ համընկնում է ինվոլյուցիոն շրջանի հետ: Կարող է ձևավորվել միայնակության զգացում՝ կապված երեխաների հեռանալու հետ: Այս փուլում հսկայական նշանակություն ունեն արտաքին գործոնները՝ նյութական վիճակի վատթարացումը, աշխատանքի անցնելու անհնարինությունը, սեփական բնակարանի բացակայությունը և այլն:

Ընտանեկան անբավարարվածության վիճակն առաջանում է կոնֆլիկտային իրավիճակների արդյունքում, որոնցում դրսևորվում է տարածայնություն տվյալ անհատի վերաբերյալ, սպասումների և նրա իրական կյանքի միջև: Կոնֆլիկտից կոնֆլիկտ, կուտակվելով, այսպիսի անբավարարվածությունը արտահայտվում է հուզական պոռթկումներում և հիստերիկ դրսևորումներում, որոնց հաճախականացումը կարող է լրջորեն խաթարել ընտանիքի ամրությունը: Ընշող մեծամասնությամբ, պատճառները, որոնք հանգեցնում են ընտանիքում կոնֆլիկտային իրավիճակի, առաջ են բերվում սոցիալական գործոններով: Մյուս ակնհայտ պատճառը, այսպես կոչված, «ուղեղի լուսավորումն» է, որը գործում է հատկապես երիտասարդ ընտանիքներում: Երբ համատեղ կյանքի ռոմանտիկ շրջանն ավարտվում է, (միջինը 1-ից 3 տարի հետո) կողակցի թերություններին համակերպվել բոլորը չեն կարողանում: Հաճախ բացահայտում են, որ կիրքը, բայց ստացած դաստիարակության, կրթության տարբերությունը, չհամընկնող կենսական արժեքները, մասնագիտական կայացածության հարցը և այլ խնդիրներ պարարտ հող են դառնում ներքին

չարացածություն համար, ինչը հանգեցնում է բացահայտ կոնֆլիկտների: Ուստի երբ ներքին լարվածությունը գերհասունանում է այն մտքից, որ կողակիցը համատեղ կյանքում ամենևին էլ այնպիսին չէ, ինչպիսին պատկերացնում էիք, սկսվում են մանր խայթոցները, որոնք սովորաբար արագ վերաճում են լուրջ վիճաբանությունների: Բացի այդ՝ կյանքի կենցաղային կողմից չես փախչի, իսկ նյութական ապահովությունը, տան պայմաններն ու հարմարավետությունը իսկապես կարևորագույն դեր են խաղում:

## ԳԼՈՒԽ 2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆֆԼԻԿՏՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

### ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿՐԱ

#### 2.1 Ի՞նչ ազդեցություն են ունենում ընտանեկան կոնֆլիկտները երեխայի հոգեբանության վրա

Կոնֆլիկտային հարաբերություններով ընտանիքներում նյութական եւ կրթական անհրաժեշտությունը, նորմերի իմացությունն ի գորու չեն կանխելու պարբերաբար ծագող անախորժությունները: Ծնողները մեկ միմյանց հետ ցերմ են, հոգատար, մեկ էլ անպատվում են իրար, իրարից բաժանվում: Ամուսինների միջև կոնֆլիկտների պատճառը դերաբաշխման մեջ կարող է լինել. հայրը ձգտում է ստանձնել ընտանիքի ղեկավարման դերը, իսկ մայրը պահանջում է փոխհամաձայնեցում, ըմբռնում: Կոնֆլիկտն առաջանում է, երբ ամուսինները տարակարծիք են դաստիարակման հարցում, և նրանցից յուրաքանչյուրը ձգտում է իր ազդեցության տակ պահել երեխային: Ընտանիքի նման անբարենպաստությունը ներգործում է երեխայի ներհոգեկան զարգացման վաղ օլթոգենեցում: Հասունացման հետ մեկտեղ, ծնողների

ներգործությունների նկատմամբ երեխայի հակազդումները համարժեք բնույթ չեն կրում:  
Ի վերջո, երեխայի մոտ մշակվում է նեգատիվ վերաբերմունք, հնչն էլ վկայում է նրանց  
միջև արդեն ստեղծվող պատնեշի մասին: Սոցիալապես ոչ լիարժեք ընտանիքները  
բնութագրվում են նյութական գաժր մակարդակով: Այսպիսի ընտանիքներում կարող է  
բազակալել ծնողներից որևէ մեկը, կամ կրթական մակարդակը շատ գաժր լինել, սակայն  
դա չի նշանակում, որ նման ընտանիքներում մեծագոյ երեխաներն ավելի շատ են  
ընդունակ բազասական ներգործությունների նկատմամբ: Էականն այն է, թե՛ հնչ բնույթ  
ունի այդ ընտանիքների հոգեբանական մթնոլորտը, որից էլ կախված է երեխայի կողմից  
գարգագումը: Ակնհայտ է, որ ընտանիքի անբարենպաստությունն հնչնին սթրեսածին,  
կոնֆլիկտածին է և առաջացնում է դաստիարակչական բնույթի շատ հիմնահնդիկներ:  
Երեխան ամենավաղ մանկությունից ընկալում է ծնողների ապրելակերպը, նրանց միջև  
տիրող հարաբերությունները: Ընտանիքում երեխայի կյանքի բարոյահոգեբանական  
մթնոլորտը հսկայական նշանակություն ունի նրա բարոյական գազամունքների  
ձևավորման վրա: Երբ ծնողների միջև հաստատվում են ցերմ, բարիդրագիական  
հարաբերություններ, երեխան իրեն երջանիկ է գգում: Ծնողների սերը երեխայի մեջ  
ձևավորում է մարդկանց նկատմամբ բարի վերաբերմունք: Կոպտությունը երեխայի  
նկատմամբ կողկայի է: Այսպիսով այն ընտանիքներում, որտեղ տիրում են կոնֆլիկտներ,  
ծնողների սոցիալ-հոգեբանական թերաճ, հիվանդություններ, վերջինները գրկում են  
երեխային լիարժեք շփումից: Ծնողների ներկայությունը և դերը երեխայի  
կյանքի առաջին տարիներին շատ մեծ է: Այն երեխաները, որոնք գրկված են մեկ կամ  
երկու ծնողից, դանդաղ են գարգանում: Անգամ եթե երեխան ծնողներից մեկին կորցնում է  
վաղ տարիքում և չի հասցնում գիտակցել այդ կորուստը, դա դժվարություններ է  
առաջացնում ապագայում: Մայրը բավարարում է երեխայի պահանջները: Այդ  
պատճառով նրա մահը կամ հեռանալն առաջացնում է ճգնաժամ շրջապատող աշխարհի  
հանդեպ: Որոշ հոգեբաններ գտնում են, որ հոր բազակայությունն այդքան էլ կորը չի  
ագդում երեխայի վրա: Սակայն առանց նրա ներկայության, նրա հետ շփման, մոր  
ագդեցությունը գարգագման գործում ավելի է մեծանում, քանի որ երեխան չի տեսնում  
վաղքի ուրիշ ձև: Նա գրկվում է տղամարդկային վաղքի օրինակից, քանի որ հենց հայրն է  
երեխային տանում դեպի հասարակություն: Իսկ միայնակ մայրը` բեռնված տնտեսական

խնդիրներով, ժամանակ չի ունենում զբաղվել երեխայով, նրա մոտ կորչում է հետաքրքրությունը, առաջանում է մոր և երեխայի օտարացում: Ավելի բարդ է այս խնդիրը դառնում, երբ գործ ունենք դեռահասի հետ: Դեռահասի համար շատ կարևոր է նրա ընդհանուր սոցիալական վիճակը, որը ձևավորվում է նաև ընտանիքի կազմով. երկու ծնողների առկայությունը դրական ձևով է ներկայացնում դեռահասին իր շրջապատում, իսկ հոր բացակայությունը թուլացնում է նրա սոցիալական դիրքը: Ամուսնալուծության հետևանքն ավելի ուժեղ է ազդում տղաների վրա, քան աղջիկների: Նրանք դառնում են անկառավարելի, ագրեսիվ, զուգաբերում են անինքնուրույնություն և տագնապ: Նրանց վաղըր թե դպրոցում և թե տանը ավելի ինֆանտիլ բնույթ է կրում, քան յիարժեք ընտանիքներից դուրս եկած դեռահասին: Ընտանիքի փլուզումը բազասաբար է ազդում ոչ միայն ամուսինների հարաբերությունների, այլև իր հետքն է թողնում ծնող-երեխա հարաբերությունների վրա: Դրանք կարելի է բաժանել երկու տիպի.

Ա) Ամուսնալուծության հետ կապված` խախտվում է մոր հուզական հավասարակշռությունը: Նրա հոգևոր ուժը չի բավականացնում, որպեսզի դժվար պահերին օգնի որդուն: Այս իրավիճակը բարդանում է այնքանով, որ, կորցնելով հոգևոր կապը երեխայի հետ դեռահասության շրջանում, մոր համար կա վտանգ, որ այն չի վերականգնվի դեռ երկար տարիներ:

Բ) Մոր գերհսամքն է, որը երեխայի մոտ կարող է առաջացնել աստելություն մոր նկատմամբ կամ նրա իշխանությունից ազատվելու գանկություն: Նման մայրերը խանդով են վերաբերվում որդուն, տալիս են նրան ամբողջ սերն ու քնքշությունը, որը չէին ծախսել ամուսնու հետ: Երբ խոսք է գնում այս կամ այն երեխայի մասին, առաջին հերթին մեզ հետաքրքրում է այն, թե ինչ ընտանիքից է նա, ինչպիսի դաստիարակություն է ստացել, ովքեր են նրա ծնողները: Եթե նրա վաղըր գովասանքի է արժանանում, ապա պարզ է դառնում, որ տվյալ անձը դաստիարակվել է յիարժեք, բարենպաստ ընտանիքում: Բարենպաստ ընտանիքը նպաստում է դրական մթնոլորտի, դրական հետաքրքրությունների, դիրքորոշումների, տրամադրության ու համերաշխության ստեղծմանը: Անբարենպաստն իր մեջ ներառում է շփման, վերաբերմունքի զուգանիշներ, որոնք դրական ուղղվածություն չունեն կամ ախտահարված են, և այն նպաստում է անձի սխալ կայացմանը: Անբարենպաստ

րևտանիքների ծնողների գգալի մասը չի կարողանում կազմակերպել րևտանեկան կյանքը, չգիտի ճիշտ մոտեցումներ երեխաների նկատմամբ. երբ բավարարում են երեխաների բոլոր րևողների և ոչ րևողների պահանջումները, չեն գգում, որ դաստիարակում են եսասեր, եսամոլ, չար, անտարբեր մարդու: Երեխայի մեջ ուրիշ մարդկանց, ծնողների նկատմամբ գգայուն, բարոյական վերաբերմունք դաստիարակելու համար անհրաժեշտ է, որ իրենք՝ ծնողները, կանգնած լինեն անհրաժեշտ մակարդակի վրա: Նրանց շնորհիվ են երեխայի մոտ ձևավորվում մարդասիրությունն ու աշխատասիրությունը: Երեխային շատ են անհրաժեշտ ծնողների ցերմ վերաբերմունքը, հոգատարությունը, ինամբը: Չափից ավելի խստությունն ու հսկողությունը պատճառ են դառնում երեխայի մոտ ագրեսիվ վարքի և կաշկանդվածության ի հայտ գալուն: Չափազանց հսկողությունը բացասաբար է ազդում երեխայի վրա, և, լինելով մշտական դիտողությունների ու ճնշվածության տակ, նա այլևս չի գուցաբերում ակտիվություն, ինքնուրույնություն: Երեխան շատ գգայուն է ու շուտ է գգում իր նկատմամբ բացասական վերաբերմունքը: Նրան չի կարելի հանդիմանել վատ արարքի համար և առավել ևս, վախեցնել: Լինում են դեպքեր, երբ ծնողների չպատճառաբանված խստության և բռնության հետևանքով երեխայի մեջ առաջագած վախը երևակայության ուժով վեր է ածվում սարսափի: Ծնողները դաստիարակում են երեխային ոչ միայն, երբ նրա հետ խոսում կամ հրամայում են, այլ նաև տևից բացակայելու ժամանակ: Ծնողի ձայնի հնչերանգի մեջ տեղի ունեցող ամենափոքրիկ փոփոխությունն անգամ երեխան գգում է, այնինչ ծնողը կարող է դա չնկատել: Եթե երեխան երբեմն ծնողի հետ կոպիտ է խոսում, կարելի է չկասկածել, որ, հավանաբար, նման կոպտություն նա լսել է նրանից: Հատկապես երեխայի վրա շատ է ազդում մոր վերաբերմունքը հոր նկատմամբ. եթե մայրն արհամարհանքով է վերաբերվում ամուսնու հետ, ապա, բնական է, երեխան կհետևի նրա վարքին: Դաստիարակության կարևոր ինստիտուտ է հանդիսանում րևտանիքը: Այն, ինչ երեխան ձեռք է բերում վաղ տարիքից՝ րևտանիքում, պահպանում է կյանքի ողջ րևթագքում: Ընտանիքը կարող է հանդես գալ որպես դաստիարակության դրական և բացասական գործոն: Դրական ազդեցությունը ձևավորման վրա այն է, որ րևտանիքի անդամներից՝ մայր, հայր, տատ, պապ, քույր, բազի ոչ ոք նրան ավելի չի սիրի և ինամի: Միաժամանակ, ոչ մի սոցիալական ինստիտուտ չի կարող այնքան վնաս հասցնել

երեխայի դաստիարակությանը, որքան ընտանիքը: Ընտանիքը հատուկ տիպի կոլեկտիվ է, որը մեծ դեր և նշանակություն ունի դաստիարակության հարցում: Դաստիարակության հետ կապված՝ հարց է ծագում. ի՞նչ անել դրական ազդեցությունն առավելագույնի, իսկ բացասականը նվազագույնի հասցնելու համար: Դրա համար անհրաժեշտ է ճշգրիտ ձևով պարզել ներընտանեկան սոցիալ-հոգեբանական փաստերը, որոնք դաստիարակության վրա ազդեցություն ունեն: Հենց ընտանիքում է երեխան ձեռք բերում կյանքի առաջին փորձը, ստեղծում աշխարհայացք և սովորում, թե ինչպես իրեն դրսևորի տարբեր իրադրություններում: Որոշ գիտնականներ գտնում են, որ անձի գծերը ձևավորող հիմնական գործոններից է սխալ դաստիարակությունը, որը երեխայի մոտ ձևավորում է ներոտիկ ռեակցիա: Դաստիարակությունը լինում է արհամարհական. այն պայմանավորված է գիտակցված և չգիտակցված պահերով: Էությունն այն է, որ կիրառվում է կամ չափից դուրս պահանջկոտություն և կոպտություն, կամ անբավարար վերահսկողություն: Առաձև ասում է, որ երեխան ընտանիքի հայելին է, նա տեսնում և սովորում է այն ամենը, ինչը տեղի է ունենում ընտանիքում: Նա այն է, ինչ իր ծնողը:

## 2.2 Կոնֆլիկտների ծագման պատճարները

### Հարբեցողություն:

Հարբեցողություն կամ այլոհոյիզմ տերմին է, որը կիրառվում է այլոհոյի հետ կապված ընդհանուր խնդիրների համար և սովորաբար կիրառվում է այլոհոյային խմիչքների պարտադիր և անվերահսկելի սպառման դեպքում: Բժշկության մեջ այն համարվում է հիվանդություն՝ մասնավորապես կախվածություն: Այլոհոյիզմի արդյունքում առաջացած սոցիալական խնդիրները բավական կարևոր են. առաջանում են ուղեղում

պաթոյոգիական փոփոխությունների և այլոհոյի թունավորման ազդեցության արդյունքում: Այլոհոյի չարաշահումը ասոցացվում է իրականացվող քրեական հանցանքների աճող վտանգի հետ (րևտանեկան բռնություն, բռնաբարություն, կողոպուտ և հարձակումներ ): Այլոհոյիցմի պատճառ կարող է դառնալ գործագրկությունը, որի արդյունքում առաջանում են ֆինանսական խնդիրներ: Անհամապատասխան ժամին խմելը և վատ վարքագիծը կարող են ունենալ իրավական հետևանքներ: Հարբեցողի վարքագիծը և հոգեկան խանգարումները ուղղակիորեն ազդում են շրջակա միջավայրի վրա և հանգեցնում են րևտանիքից և րևկերներից մեկուսանալուն: Մեկուսացման արդյունքում կարող է առաջանալ ամուսնական վեճեր և բաժանում կամ րևտանեկան բռնություն: Այլոհոյիցմի պատճառով կարող են անտեսվել այլոհոյիկների երեխաները: Այդ պատճառով նման ծնողների երեխաների մոտ կարող են առաջանալ մի շարք էմոցիոնալ խնդիրներ: Օրինակ՝ երեխաները կարող են վախենալ հրենց ծնողների անկալուն վարքագծից:

Գործագրկություն:

Տան,րևտանիքի հոգսը պարտավոր են հոգալ ծնողները հավասարաչափ:Այն ծանր բեռ է հատկապես, երբ րևտանիքը բազմանդամ է: Լինում են դեպքեր երբ այդ հոգսը կրում է միայն տան կինը,և իհարկե դա մեծ անախորժության պատճառ կարող է դառնալ:

Խաղամոլություն:

Խաղամոլությունը կախվածությունն է մոլախաղերից: Խաղամոլության հիմնական գուլգանիշն անրևդիատ դրանցում ներգրավվածությունն է, որը, որպես կանոն, ժամանակի հետ ավելի է խորանում՝ իր հետ բերելով սոցիալական, նյութական և ֆինանսական խնդիրներ:

Ընտանիքում խաղային կախվածությամբ անձի առկայությունն խիստ վատ է ազդում անդամների հոգեկան աշխարհի վրա:Որպես կանոն՝ նրանք ունենում են համակախվածություն: Ինչպես նաեւ բնորոշ են անհանգստությունը, վախերը, ապագայի հանդեպ անորոշությունը, քանի որ խաղազոդի ընտանիքի անդամն ամեն պահի կարող է անսպասելի հայտնվել շատ տիպիկ և կամ բարդ կենսական իրավիճակում. հանկարծ կարող են տեղեկանալ, որ նորից խաղազել է, պարտվել, կամ հաճախ ընտանիքի անդամներն առնչվում են պարտատերերի հետ, կանգնած են գանազան տազնապային վիճակների առաջ: Կարող են լինել նաեւ դեպրեսիվ վիճակներ, երբ ինդիվիդ երկար ժամանակ առկա է ու չի լուծվում:

Անտարբերություն ընտանիքում:

Մեր իմաստուններից մեկն ասել է. մի վախեցեք ձեր ընկերներից, նրանք միայն կարող են դավաճանել ձեզ, մի վախեցեք ձեր թշնամիներից, նրանք կարող են սպանել ձեզ, վախեցեք անտարբերներից միայն, նրանց յուր համաձայնությամբ են կատարվում և՛ սպանությունները, և՛ դավաճանությունները:

Չետևաբար, ի՞նչ է նշանակում անտարբեր լինել:

Առանց հետաքրքրության կամ մտահոգության; անտարբերություն; անտարբեր՝ հո անտարբեր վերաբերմունք ուրիշների տառապանքների նկատմամբ. չունենալով կողմնակալություն, նախապաշարմունք կամ նախապատվություն. անաչառ; անշահախնդիր. ոչ լավ, ոչ վատ բնավորությամբ կամ որակով; միջին; առօրյա՝ անանտարբեր նմուշ, և բնականաբար սա հանգեցնում է յուրօր ինդիվիդների ընտանիքում:

Դեռահասների ինդիվիդները ծնողների հետ:

Այս շրջանում նրանք չեն հասկանում, թե ինչ է կատարվում իրենց հետ: Փոքրիկ մի բանից ներդրում են, արտասվում, գայրանում, կոպտում ծնողներին, չեն ուզում երբեմն շփվել



րնկերների հետ կամ չափից ավելի երկար են գրուցում հեռախոսով, սիրահարվում են, հուսահատվում, երբեմն վտանգավոր քայլերի դիմում,երբ փորձում են գտնել իրենց հարցերի պատասխանները, երբեմն էլ խճճվում են տարատեսակ տեղեկատվության մեջ, որով այսօր յի է մեր միջավայրը (համագանգ, ամսագրեր, գրականություն, հեռուստատեսություն, ռադիո և այլն):Սեփական երեխաներին բոլորից շատ սիրելով՝ միևնույն ժամանակ ծնողները կարող են չհասկանալ ու անտեսել նրանց, խիստ կամ կոպիտ լինել: Դա կարծես բոլորին, և՛ երեխաներին, և՛ ծնողներին, հատուկ բան է: Երբեմն այդ կոնֆլիկտներն առաջանում են նրանից, որ որոշ հարցեր մեծահասակի համար այդքան էլ հեշտ չէ քննարկել դեռահասի հետ, ոչ էլ՝ դեռահասին՝ մեծահասակի հետ:Կոնֆլիկտները չեն առաջանում միայն երեխա-ծնող հարաբերություններում,այլ նաև ծնողների միջև,քանի որ նրանցից մեկը փորձում է պաշտպանել երեխային,չնկատելով նրա սխալները:Եթե մի ծնողը արգելքներ է դնումը երեխայի առջև, իսկ մյուսը լիովին ազատություն է տալիս երեխային,մեծ խնդիր է ծագում ծնողների միջև:

### 2.3 Կոնֆլիկտի լուծման մի քանի ասպեկտներ

Կոնֆլիկտները մարդկային հարաբերությունների մեջ բացասական էմոցիաներ առաջացնող ամենահաճախ հանդիպող երևույթներն են, որովհետև մարդիկ սոցիալական էակներ են և հետաքրքրված են սոցիումում սեփական անձի ընկալման ասպեկտներով: Տարբերում ենք երկու տեսակի կոնֆլիկտներ՝ ներանձնային և միջանձնային: Ներանձնային կոնֆլիկտները ներքին տարբեր մղումների միջև բախումներն են՝ տեսակետների և ցանկությունների, բարոյական ընկալումների և պահանջմունքների, հնարավորությունների և կարողությունների: Ներքին կոնֆլիկտները կարող են գիտակցվել և չգիտակցվել: Միջանձնային կոնֆլիկտներն ավելի հեշտ են լուծելիությանց տեսանկյունից, սակայն ավելի շատ լարվածության առիթներ են ստեղծում: Ներքին կոնֆլիկտները հարթելը ավելի հաճախ մասնագիտական միջամտություն են պահանջում, քանի որ այս կոնֆլիկտները հաճախ գիտակցված չեն:

Կոնֆլիկտների լուծման համար շատ կարևոր է վերլուծել դիմացի մարդու կամ առհասարակ մարդկանց վարքի պատճառները: Սովորաբար կոնֆլիկտի վիճակում գտնվող մարդիկ կարծում են, որ կոնֆլիկտի մյուս կողմում գտնվող մարդը ցանկանում է իրենց վնասել: Սակայն մեծ հաշվով մարդիկ վարվում են այս կամ այն կերպ միայն իրենց ներքին մղումներից և իրենց սեփական ինդիքները լուծելու համար: Այսինքն՝ իրենց վարքը հիմնականում պայմանավորված է իրենց վախերով, անհանգստություններով, անլիարժեքության զգացմամբ և այլն: Կոնֆլիկտային իրավիճակներում շատ օգտակար է ռեալացնել սեփական ակնկալիքները: Երբ մենք զգալիորեն պակասեցնում ենք մեր ակնկալիքները, բնականաբար կոնֆլիկտի առիթը նույնպես նվազում է: Շատ կարևոր է վերլուծել մեր ակնկալիքների իրատեսականությունը: Կոնֆլիկտները լուծելուն շատ է օգնում այն գաղափարը, որ ճշմարտությունը տարբեր է: Այս իրավիճակին համապատասխան մի ասույթ կա. «Այս աշխարհում երեք ճշմարտություն կա՝ իմ ճշմարտությունը, քո ճշմարտությունը և ճշմարտությունը»: Այս գիտակցումն օգնում է կոնֆլիկտային իրավիճակներում լինել ավելի հանդուրժող և ճկուն:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ընդհանրացնելով կատարած աշխատանքը՝ պետք է եզրակացնել, որ ընտանիքի անառողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են գործում երեխայի վրա: Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է ծանր բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր ինքնագնահատական: Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, ուստի յուրաքանչյուր մեծահասակ ամուսնական զույգ պետք է սթափ գիտակցի, որ պատասխանատվություն է կրում ձևավորելու և դաստիարակելու առողջ երեխա: Այդ պատճառով ընտանիքում պետք է. 1. կոնֆլիկտների թիվը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում դրանց արագ լուծում տալ

2. ընտանիքում ստեղծել խաղաղ, հանգիստ մթնոլորտ երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման համար

3. բարիդրացիական հարաբերություններ հաստատել ինչպես երեխայի, այնպես էլ ընտանիքի բոլոր անդամների հետ՝ հիմնված սիրո և հարգանքի վրա:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սեդրակյան Ս.Ա. Ընտանիքի հոգեբանություն. Երևան: Ուրարտու համալս., 2010, 456 էջ
2. «Հոգեբանությունը և կյանքը» Տաթև գիտական համալիր
3. В.Х. Мирзоян : Виды семейных конфликтов и их воздействие на формирование
4. Сергейчук А.В. Социология управления. - СПб.: Бизнес-пресс, 2002. 240с
5. Столяренко А.М. Общая и профессиональная психология. - М.: ЮНИТИ-ДАНА, 2003. 382с